ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Նոյեմբերի 1-ին, շաբաթ.– Տօն ամենայն սրբոց՝ հնոց և նորոց, յայտից և անյայտից:

Այսօր Մայր Աթոռում, երջանկահիշատակ Տ. Տ. Մկրտիչ Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի շիրմի մոտ, բարձր նախագահութեամբ Վեհափառ Հայրապետի, կատարվեց Հոգեհանգստյան կարգ՝ ի հիշատակ Հայրիկի մահվան 30-րդ տարելիցի: Արարողությունից հետո Վեհարանի դահլիճում տեղի ունեցավ հանդիսություն (տես էջ 201)

Նոյեմբերի 2-ին, կիրակի.– Ը կիրակի զկնի Սուրբ Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր Տ. Բագրատ արեղա Գալստյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Հայր Սուրբը՝ «Ոչ ոք լուցանէ ճրագ եւ թաքուցանէ ընդ կարասեաւ. կամ դնէ ընդ մահճօք, այլ ի վերայ աշտանակի դնէ, զի որ մտանեն, զլոյս տեսցեն» բնաբանով (Ղուկ. Ը 16):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

Նոյեմբերի 4-ին, երեքշաբթի.– Սրբոցն Ակիփսիմեայ եպիսկոպոսին և Ծովսեփեայ քահանային, Այիթալայ սարկաւագին և Պղատոնի վկային:

Այսօր Վեհափառ Հայրապետը, գավազանակիր ունենալով «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր Տ. Բագրատ արեղա Գալստյանին, մեկնեց Մեծ Բրիտանիա՝ Հեթերքերիի Արքեպիսկոպոսի հրավերով, ինչպես նաև տեղի հայ համայնքին հովվապետական այցելություն տալու նպատակով (տես էջ 4):

Նոյեմբերի 9–ին, կիրակի.– Թ կիրակի զկնի Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Խաչատուր ա. քհն. Ճրաճկյանը: «Հայր մեր»–ից առաջ քարոզ խոսեց Տ. Միքայել Ծ. վրդ. Աջապահյանը՝ «Վասն այնորիկ կոչեցաւ անուն նորա Խառնակութիւն, զի անդ խառնակեաց Տէր Աստուած զլեզուս ամենայն երկրի» բնաբանով (ԾՆՆԴ. ԺԱ 9):

Ս. Պատարագից հետո կատարվեց հոգեհանգստյան կարգ:

Նոյեմբերի 16–ին, կիրակի.– Ժ կիրակի զկնի Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Վեհափառ Հայրապետի գավազանակիր Տ. Արտակ արեղա Տիգրանյանը: «Հայր մեր»–ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Հայր սուրբը՝ «Պիտոյ է ձեզ համբերութիւն, զի զկամս Աստուծոյ արարեալ հասջիք աւետեացն» բնաբանով (Եբր. Ժ 36):

Ս. Պատարագից հետո կատարվեց հոգեհանգստյան կարգ:

Նոյեմբերի 19–ին, չորեքշաբթի.– Պահք:

Այսօր Տ. Միքայել Ծ. վրդ. Աջապահյանը մեկնեց Կալկաթա՝ համալնքային խնդիրներին և Մարդասիրական Ճեմարանի վիճակին տեղում ծանոթանալու նպատակով: Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ Հայր սուրբը նոյեմբերի 28–30–ը այցելեց Հնդիկ Ուղղափառ Եկեղեցու (Մալաբարկարա Ուղղափառ Ասորական Եկեղեցի) պետ Մատթեոս Բ կաթողիկոսին՝ վերջինիս նստավայր Քոթայամ քաղաքում: Այցի ընթացքում որոշակի պայմանավորվածություն ձեռք բերվեց Վեհափառ Հայրապետի առաջիկա պաշտոնական այցելության ջուրջ: Հայր սուրբը Մայր Աթոռ վերադարձավ դեկտեմբերի 5–ին:

Նոյեմբերի 21–ին, ուրբաթ.– Պահք:

Այսօր Մարսել (Ֆրանսիա) մեկնեց ԶԴԶԿ–ի վարիչ–տնօրեն Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը՝ մասնակցելու Մարսելում անցկացվող «Հոգևոր կյանքը Հայաստանում» խորագիրը ունեցող համագումարին: Համագումարի ընթացքում դասախոսություն կարդաց Հոգեշնորհ Հայր Սուրբը՝ «Հոգևոր կյանքը Հայաստանում» թեմայով:

Նոյեմբերի 22–ին, շաբաթ.– Սրբոցն Գրիգորի Սքանչելագործին, Նիկողայոսի Հայրապետին և Միւռոնալ Եպիսկոպոսին:

Այսօր Վեհափառ Հայրապետը Մեծ Բրիտանիայից վերադարձավ Մայր Աթոռ (տե՛ս էջ 43):

Նոյեմբերի 23–ին, կիրակի.– Ա կիրակի Ցիսնակաց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Տաճարի փոխվուսարարապետ Տ. Անուշավան արեղա Ժամկոչյանը: «Հայր մեր»–ից առաջ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը (տե՛ս էջ 44–46):

Ս. Պատարագից հետո կատարվեց հոգեհանգստյան կարգ:

Նոյեմբերի 28-ին, ուրբաթ.- Պահք:

Այսօր Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց դահլիճում տեղի ունեցավ Ս. Բարդողիմեոս և Ս. Թադեոս առաքյալներին նվիրված հանդիսություն:

Հանդիսությանը ներկա էր Վեհափառ Հայրապետը (տե՛ս էջ 223):

Նոյեմբերի 29-ին, շաբաթ.- Սրբոց Առաքելոցն և առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարդուղիմէոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց ՔՂԴՔԿ փոխտեսուչ Տ. Զարեհ արեղա Կաբաղյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Հայր սուրբը՝ «Ի բաց մերկանալ ի ձէնջ ըստ առաջինն գնացիցն զմարդն հին...» բնաբանով (Ծփես. Դ 22):

Ս. Պատարագից հետո Վեհարանի հանդիսությանց դահլիճում տեղի ունեցավ Քրիստոնեական Դաստիարակության օրվան նվիրված հանդիսություն (տե՛ս էջ 217):

Նոյեմբերի 30-ին, կիրակի.- Բ կիրակի Ծիսեական:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց 1700-ամյակի կենտրոնական գրասենյակի քարտուղար Տ. Աշոտ արեղա Մնացականյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը (տե՛ս էջ 226):

Ս. Պատարագից հետո, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, կատարվեց Հոգեհանգստյան կարգ՝ Եղիշե Չարենցի ծննդյան 100-ամյակի և մահվան 60-րդ տարելիցի առիթով:

Դեկտեմբերի 3-ին, չորեքշաբթի.- Պահք:

Այսօր Վեհարանում տեղի ունեցավ միաբանական ժողով, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը անդրադարձավ Հայ Եկեղեցուն հուզող արդիական հարցերին: Միաբանական ժողովի ընթացքում խոսեցին Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը, Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը, Տ. Բագրատ արեղա Գալստյանը:

Դեկտեմբերի 6-ին, շաբաթ.- Սրբոյն Նիկողայոսի Զմիւռնացւոյ Սքանչելագործ հայրապետին:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Միջին Արևելքի Անգլիկան Եկեղեցու պետ Գեր. Տ. Սամիր Քաֆիթի եպիսկոպոսը (տե՛ս էջ 47):

Դեկտեմբերի 7-ին, կիրակի.- Գ կիրակի Ծիսեական:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. կարապետ արեղա Հարությունյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Հայր սուրբը:

Ս. Պատարագից հետո կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ ի հիշատակ 1988 թ. մեծ երկրաշարժի զոհերի իններորդ տարելիցի:

Դեկտեմբերի 12-ին, ուրբաթ.- Պահք:

Այսօր Մայր Աթոռ ժամանեց Եգիպտոսի հայոց թեմի Առաջնորդ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Գեր. Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը:

Դեկտեմբերի 13–ին, շաբաթ.– Սրբոցն Յակովբայ Մծբնայ հայրապետին, Մարուգէի ճգնաւորին, Մեղիտոսի եպիսկոպոսին:

Այսօր Մայր Աթոռ ժամանեցին Գերագույն Հոգևոր Խուրհուրդի անդամներ Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի Առաջնորդ Գեր. Տ. Աղան արքեպս. Պալիոզյանը և Արգենտինայի հայոց թեմի Առաջնորդ Գեր. Տ. Գիսակ արքեպս. Մուրադյանը:

Նույն օրը, երեկոյան ժամերգությունից հետո, տեղի ունեցավ Սամվել, Նշան, Տիգրան սարկավագների քահանայական կոչման արարողությունը՝ նախագահությամբ Եգիպտոսի հայոց թեմի Առաջնորդ Գեր. Տ. Զավեն արքեպս. Չինչինյանի (տե՛ս էջ 186):

Դեկտեմբերի 14–ին, կիրակի.– Դ կիրակի Ցիսնակաց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Եգիպտոսի հայոց թեմի Առաջնորդ Գեր. Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը: Հընթացս Ս. Պատարագի կատարվեց Սամվել, Նշան, Տիգրան սարկավագների քահանայական ձեռնադրությունը՝ ձեռամբ պատարագիչ Սրբազան Հոր և խարտավիլակությամբ Գևորգյան Հեմարանի տեսուչ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանի: Ձեռնադրությունից հետո նորընծաներին՝ Տ. Արշակ, Տ. Խորեն և Տ. Արշեն աբեղաներին պատգամ տվեց պատարագիչ Սրբազանը:

Երեկոյան ժամերգությունից հետո Ավագ խորանի վրա կատարվեց նորընծաների վեղարի տվչության կարգը՝ ձեռամբ Գեր. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի (տե՛ս էջ 193):

Դեկտեմբերի 15–ին, երկուշաբթի.– Սրբոց հայրապետացն՝ Իգնատիոսի և Ադդէի և Մարութայի եպիսկոպոսին:

Այսօր Մայր Աթոռ ժամանեցին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ Հայրապետական պատվիրակ և Փարիզի հայոց Առաջնորդ Գեր. Տ. Գյուտ արքեպս. Նագգաշյանը, ԱՄՆ–ի հայոց Արևմտյան թեմի Առաջնորդ Գեր. Տ. Վազէն արքեպս. Հովսեփյանը, ԱՄՆ–ի հայոց Արևելյան թեմի Առաջնորդ Գեր. Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը, Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Գեր. Տ. Գևորգ արքեպս. Սերապիոնյանը, Արցախի թեմի Առաջնորդ Գեր. Տ. Պարգև եպս. Մարտիրոսյանը, Սյունյաց թեմի Առաջնորդ Գեր. Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանը, Գեղարքունիքի թեմի Առաջնորդ Գեր. Տ. Անանիա եպս. Արաբաջյանը, Արագածոտնի թեմի Առաջնորդ Գեր. Տ. Նավասարդ եպս. Կճոյանը:

Դեկտեմբերի 16–19

Վեհարանում գումարվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի ընդլայնված նիստը՝ նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ատենապետությամբ Եգիպտոսի հայոց թեմի Առաջնորդ Գեր. Տ. Զավեն արքեպս. Չինչինյանի ու ԱՄՆ–ի հայոց Արևմտյան թեմի Առաջնորդ Գեր. Տ. Վազէն արքեպս. Հովսեփյանի:

Դեկտեմբերի 21–ին, կիրակի.– Ե կիրակի Ցիսնակաց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Բաբկեն արեղա Սալբիյանը: «Հայր մեր»–ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Հայր սուրբը՝ «Աստուած քաւեա զիս զմեղաւորս» (Ղուկ. ԺԸ 13) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:
Ս. Պատարագից հետո կատարվեց հոգեհանգստյան կարգ:

Դեկտեմբերի 24-ին, չորեքշաբթի.- Պահք:

Այսօր Վեհարանում տեղի ունեցավ միաբանական ժողով, որի ընթացքում իրենց հովվական փորձառությունը միաբաններին փոխանցեցին ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Մակար արեղա Հովհաննիսյանը (Իրաք), Տ. Աբգար արեղա Հովակիմյանը (Բաթում), Տ. Բարսեղ արեղա Փիլավչյանը (Ստեփանավան):

Դեկտեմբերի 25-ին, հինգշաբթի.- Սրբոյն Ստեփաննոսի նախավկային և առաջին մարտիրոսին:

Այսօր Մայր Տաճարում, Ս. Ստեփաննոսի խորանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսեհ արեղա Խալաթյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Գեր. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը (տե՛ս էջ 102):

Երեկոյան Գևորգյան Ճեմարանի հանդիսությանց դահլիճում տեղի ունեցավ Ս. Ստեփաննոսի ոգեկոչման հանդիսություն:

Հանդիսությանը ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Դեկտեմբերի 28-ին, կիրակի.- Զ կիրակի Ծիսակաց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մակար արեղա Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Հայր սուրբը՝ մեկնելով օրվա Ավետարանը (Ղուկ. ԺԹ 12):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Դեկտեմբերի 31-ին, չորեքշաբթի.- Պահք:

Այսօր Հոգևոր Ճեմարանի նախկին շենքի հանդիսությանց սրահում տեղի ունեցավ կաղանդի երեկո, որին մասնակցելու էին եկել Մայր Աթոռի միաբաններ տարբեր թեմերից:

Հանդիսությանը ներկա էր Վեհափառ Հայրապետը: